



ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ
ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԵՎ
«ՔՅԱՎԱՌ» ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ



ք. Գավառ

20. 03. 2012թ.

Գավառի պետական համալսարանը՝ (այսուհետ՝ Համալսարան) ի դեմս ռեկտոր Ռ. Խ. Հակոբյանի՝ մի կողմից և «Քյավառ» հեռուստաընկերությունը՝ (այսուհետ՝ Հեռուստաընկերություն) ի դեմս տնօրեն Ա. Ս. Գալստյանի՝ մյուս կողմից (այսուհետ՝ Կողմեր),

Ուղղունելով և կարևորելով՝

- ✓ Գեղարքունիքի մարզի սոցիալ-մշակութային առաջընթացին աջակցելու խնդիրը,
- ✓ Գավառ քաղաքի և հարակից համայնքների զարգացմանը նպաստելու անհրաժեշտությունը,
- ✓ Երիտասարդների հայրենասիրական, քաղաքացիական, բարոյական, հոգևոր-մշակութային դաստիարակության պահանջը,
- ✓ Ազգային արժեքների պահպանման և տարածման հրամայականը,

Ելնելով՝

- Համալսարան-Հեռուստաընկերություն համագործակցության ամրապնդման,
- համատեղ ուժերով երիտասարդների համար կրթական, տեղեկատվական, ճանաչողական, մշակութային ծրագրերի իրականացման,
- Հեռուստաընկերության գործունեությանը ծանոթացնելու միջոցով Համալսարանի ուսանողների շրջանում որոշակի հաղորդակցական և կազմակերպական հմտությունների ձևավորման,
- Հեռուստաընկերության կողմից Համալսարանի գործունեության պատշաճ լուսաբանման,
- Համալսարանի սոցիալական պատասխանատվությունն ու հաշվետվողականությունն ապահովող քաղաքականության և համապատասխան ընթացակարգերի իրականացման նպատակներից,

Կնքում են Համագործակցության Հուշագիր՝ հետևյալ գործողությունների համատեղ իրականացման մասին.

1. Հաստատել փոխշահավետ և բազմաբնույթ համագործակցային հարաբերություններ,
2. Համատեղ ուժերով նպաստել ուսանողների հայրենասիրական ոգու և մշակութային մակարդակի բարձրացմանը,
3. Պայմաններ ստեղծել կրթական, գիտական, ուսումնամեթոդական, դաստիարակչական, սոցիալ-մշակութային ծրագրերի համատեղ իրականացման համար,

4. Ուսանողների և ընդհանրապես հասարակության մեջ արմատավորել հարգալից վերաբերմունք մայրենի լեզվի, հայ ժողովրդի նյութական և հոգևոր ժառանգության, ազգային արժեքների նկատմամբ,

5. Ուսանողների շրջանում ծավալել շարունակական քարոզչական գործունեություն՝ ուղղված գիտելիքի և որակյալ կրթության՝ որպես անձի կայացման կարևոր գործոնների արժևորմանը,

6. Կողմերի համատեղ ուժերով պատրաստել և հեռարձակել «Համալսարանական ժամ» հաղորդաշարը,

7. Հասարակությանն իրազեկել Համալսարանում իրականացվող բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրերի, ուսուցման ձևերի, լրացուցիչ և շարունակական կրթական ծրագրերի, կրթության որակն ապահովող կառուցակարգերի, շնորհվող կրթական աստիճանների, շահառուներին հետաքրքրող այլ հարցերի վերաբերյալ,

8. Հեռուստաընկերությունում կազմակերպել Համալսարանի ուսանողների պրակտիկան,

9. Ուսանողներին ծանոթացնել զանգվածային լրատվական միջոցների աշխատանքի սկզբունքներին ու ներկայացվող հիմնական պահանջներին,

10. Համալսարանի դասախոսների ուժերով կազմակերպել հաղորդումներ՝ «Դասը վարում են համալսարանականները» խորագրով,

11. Հեռուստաընկերության աշխատակազմի ուժերով ուսանողների համար կազմակերպել լրագրությանը նվիրված ակնարկային դասախոսություններ,

12. Համալսարանի ուսումնական նպատակներով օգտագործել Հեռուստաընկերությանը պատկանող ենթակառուցվածքները,

13. Հեռուստաընկերության աշխատանքային գործունեության իրականացման նպատակներով օգտագործել Համալսարանին պատկանող ենթակառուցվածքները,

14. Համալսարանի «Տպագիր և էլեկտրոնային մամուլ», «Լրագրության հիմունքներ», «Զանգվածային լրատվական միջոցների գործունեության հիմնահարցեր» դասընթացներին մասնակից ուսանողների ուժերով Համալսարանում կազմակերպել Հեռուստաընկերության թղթակցային կետ,

15. Սույն Հուշագրի 14-րդ կետում նշված դասընթացներին, ինչպես նաև Համալսարանում իրականացվող մայրենի և օտար լեզուների իմացության, համակարգչային հմտությունների զարգացման, այլ լրացուցիչ կրթական ծրագրերին մասնակցելու հնարավորություն ընձեռել Հեռուստաընկերության աշխատակիցներին,

16. Համալսարանի թղթակցային կետի, ուսանողական խորհրդի, ուսանողական գիտական ընկերության, Համալսարանի այլ կառուցվածքային ստորաբաժանումների համատեղ ջանքերով կազմակերպել պետական և այլ տոնական օրերին ու պատմական իրադարձություններին, հոբելյաններին նվիրված միջոցառումներ, գիտաժողովներ և դրանք լուսաբանել Հեռուստաընկերությամբ,

17. Ուսանողներին մասնակից դարձնել Հեռուստաընկերության կողմից կազմակերպվող տարբեր հեռուստահաղորդումներին,

18. Երիտասարդությանը հուզող, հանրային հնչեղություն ունեցող թեմաներով կազմակերպել քննարկումներ, բանավեճեր, «կլոր սեղաններ», դրանք հետարձակել ուղիղ միացմամբ՝ ապահովելով հանրության լայն շրջանակների մասնակցությունը,

19. Ստեղծել աշխատանքային խումբ՝ բաղկացած Հեռուստաընկերության ղեկավար կազմից և Համալսարանի ներկայացուցիչներից՝ Կողմերի գործակցության հիմնական ուղղությունների քննարկման և հստակեցման, համագործակցության զարգացման ապահովման նպատակով,

20. Հեռուստաընկերության գործունեության հետագա բարելավման նպատակով համատեղ մշակել հարցաթերթիկներ և Համալսարանի ուսանողների միջոցով կազմակերպել հարցախոյզ՝ ուղղված զանգվածային լրատվամիջոցների նկատմամբ հասարակության վերաբերմունքի, սոցիալական պահանջների և ակնկալիքների բացահայտմանը,

21. Ուսանողների և դասախոսների ուժերով իրականացնել Հեռուստաընկերության հաղորդումների լեզվական մշտադիտարկում՝ արդյունքների մասին տեղյակ պահելով Հեռուստաընկերությանը,

22. Իրականացնել կրթական, գիտական, տեղեկատվական այլ ծրագրեր:

Հուշագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և կարող է լրացվել ու փոփոխվել Կողմերի համաձայնությամբ:

Կ Ո Ղ Մ Ե Ր

**ԳՎՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**

Ռեկտոր՝  Ռ. Խ. Հակոբյան



«ՔՅԱՎԱՌ»

ՀԵՌՈՒՍԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Տնօրեն՝  Ա. Ս. Գալստյան

